<<Ամբերդի Հայրապետ Նավասարդյանի անվան միջնակարգ դպրոց>> և <<Լեռնամերձի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ների միացյալ կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1. ՀՀ քաղաքացիությունը,
2. «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված հիմքերի բացակայությունը:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

1. դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,
2. ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը (բնօրինակի հետ),
3. հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը (բնօրինակի հետ),
4. տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (որը հավակնորդը կարող է ներկայացվել մինչև գործերի ընդունման ժամկետի ավարտը) (այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակով), որը խորհրդի որոշմամբ լիազորված խորհրդի անդամը հավակնորդի կողմից տրամադրելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է հրապարակման տվյալ դպրոցի պաշտոնական կայքում, ինչպես նաև տրամադրում է խորհրդի մյուս անդամներին,
5. ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Փաստաթղթերն ընդունվում են **2021թ. դեկտեմբերի 21-ից մինչև 2022 թ. հունվարի 12-ը ներառյալ**, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից, Ամբերդի Հայրապետ Նավասարդյանի անվան միջնակարգ դպրոցում:

Մրցույթը տեղի կունենա **2022 թվականի հունվարի 26-ին՝ ժամը 15:00-ին**, ՀՀ Արմավիրի մարզի Ամբերդի Հայրապետ Նավասարդյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ ՀՀ Արմավիրի մարզ, Ամբերդ համայնք, Հաղթանակի 28:

Տեղեկությունների համար դիմել հեռախոս՝ 095150809 և 093329575:

էլ.փոստ՝ amberdh@mail.ru: